



ՀԱՆԳԻՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՎԱՐՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻ
(1908—1970)



Սույն թվականի ապրիլի 20-ին Մոնտեպի-
 դեո քաղաքում (Հարավային Ամերիկա), իր
 հարազատների հարկի ներքո, 62 տարեկան

հասակում վախճանվեց Մայր Աթոռի միա-
 քան տ. Շավարշ եպս. Գույումճյանը:

Լուսահոգի տ. Շավարշ սրբազանը (ալա-
 զանի անունով Մատթեոս) ծնվել է 1908
 թվականին Կիլիկիայի Հանրն քաղաքում:
 Դեռևս փոքր հասակից նա ականատես է ե-
 դել և իր մարմնի վրա զգացել համաշխար-
 հային առաջին պատերազմի ծանր արհա-
 վիրքները, տեսել է հայրենի Հանրն քաղա-
 քի ավերն ու կոտորածը: Նա իր ծնողների՝
 Գալուստ Գույումճյանի և Երանուհի Քոշ-
 կերյանի, ինչպես նաև իրենց ողջ ընտանի-
 քի հետ դեգերել է գաղթի ու արքայի անա-
 պարհներում, տեսել Դեյր էլ-Զորը, ապա,
 քախտի բերմամբ մահից ազատված, բազ-
 մաթիվ հայ գաղթականների հետ միասին
 բնակություն հաստատել Դամասկոսում:
 Այստեղ իր առաջին կրթությունն է ստանում
 Մատթեոսը, ապա սովորում նաև տեղի
 անգլիական կոլեջում:

1924 թվականին նա մեկնում է Երուսաղեմ
 և ընդունվում տեղի Ժառանգավորաց վար-
 ժարանը, որտեղ աշակերտում է երջանկա-
 հիշատակ տ. Եղիշե արքեպ. Գուրյանին և
 իոզերույս տ. Բարգեև եպս. Կյուլեսերյանին:
 1930 թվականին ավարտում է ընծայարանի
 ֆարսնական բաժինը և ձեռնադրվում կու-
 սակրոն քահանա:

1931 թվականին երիտասարդ Շավարշ
 վարդապետը Կյուլպենկյան հիմնադրամով,
 վանքի ղեկավարության որոշումով մեկնում

Է Լոնդոն և հետևում Կինգզ կոլեջի կրոնական դասընթացներին: 1933 թվականին նա վերադառնում է Երուսաղեմ և նվիրվում վանական և կրթական աշխատանքների: Երկար տարիներ նա ձեռնհաստքեն վարում է հոգևոր հովվությունը Հայֆայի հայ համայնքի:

1949 թվականին լուսահոգի Ս. Գարեգին Վեհի համաձայնությամբ նա նշանակվել է Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ: Նա հոգևոր-ազգային մեծ աշխուժացում է առաջ բերում Դամասկոսի ինչպես եկեղեցական-հասարակական, այնպես էլ կրթական ու մշակութային կյանքում, վայելում իր ժողովրդի սերն ու համակրանքը և ապա թեմի պատգամավորական ժողովի կողմից ընտրվում Դամասկոսի թեմի առաջնորդ:

Ծավարշ վարդապետը առաջին անգամ մայր հայրենիքում և ս. Էջմիածնում լինում է 1954 թվականին՝ Նորին Ա. Օծություն Ս. Տ. Գևորգ Զ-ի մահվան առթիվ: Իսկ երկրորդ անգամ հայրենիք է այցելում հաջորդ՝ 1955 թվականի հոկտեմբերին, որպես իր թեմի պատգամավոր՝ մասնակցելու ազգային-եկեղեցական ժողովի և Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ընտրությանը:

Նույն թվականի հոկտեմբերի 23-ին Հայոց

Հայրապետը, բարձր գնահատելով տ. Ծավարշ վարդապետի ազգային-եկեղեցական գործունեությունը, նրան ձեռնադրում է եպիսկոպոս՝ միջնորդությամբ և խնդրանքով իր թեմի ազգային-եկեղեցական մարմինների:

Ծավարշ սրբազանը երկար տարիներ ձեռնհաստքեն և մեծ արդյունավորությամբ պաշտոնավարում է Դամասկոսի թեմում, սերտ համագործակցությամբ և սիրով իր ժողովրդի և ազգային մարմինների: Սակայն վերջին տարիներս արդեն քայքայվել էր նրա առողջությունը: Այդ իսկ պատճառով 1968 թվականի ամռանը մեկնում է Մոնտեվիդեո, իր հարազատների մոտ, որտեղ և կնքում է իր մահկանացուն:

Հանգուցյալ սրբազանը եղել է նաև գիտության մարդ, որի գրչին են պատկանում մի շարք կրոնագիտական, պատմական, բանասիրական և այլ բնույթի արժեքավոր ուսումնասիրություններ:

Ավելի քան 40 տարի է, ինչ Ծավարշ սրբազանը աննահանջ սիրով և մեծ հավատարմությամբ ծառայել է հայ եկեղեցուն, Մայր Աթոռ ս. Էջմիածնին, հայ ժողովրդին, հայոց հայրենիքին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

